# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

## ՈՐՈՇՈՒՄ
## ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29.01.2024թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով, ըստ հայցի <<Սավա>> ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի 18.12.2023 թվականի գրությունն /որոշումն/ մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

## ՊԱՐԶԵՑ

Դիմելով դատարան՝ Հայցվորի ներկայացուցիչը խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի 18.12.2023 թվականի գրությունը /որոշումը/՝ <<Սավա>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով:

Հայցադիմումը դատարանում մուտքագրվել է 19.01.2024 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/0369/02/24 քաղաքացիական գործը, որը մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին:

Քաղաքացիական գործը դատավորի աշխատակազմին հանձնվել է 24.01.2024 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր տեղեկությունները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, Դատարանը գտնում է, որ պատասխանող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից պետք է պահանջել <<ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ԵԽ>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. <<Սավա>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի 18.12.2023 թվականի գրությունն /որոշումն/ մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից պահանջել դատարան ներկայացնել <<ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ԵԽ>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում պայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

**ԴԱՏԱՎՈՐ** **Ս.ԵՐԻՑՅԱՆ**